ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ)

342(47)
Ս-11

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1940

01 MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

342(47)
U-11

08 FEB 2001

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ)

ՍՍՌՄ Գերագույն Սովետի I, II, III, VI և VII Սեսիաների
ընդունած փոփոխություններով և լրացումներով

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1940

34 848

02 AUG 2013

0 FEB 2007

738
41

КОНСТИТУЦИЯ

(ОСНОВНОЙ ЗАКОН)

СОЮЗА СОВЕТСКИХ СОЦИАЛИСТИЧЕСКИХ РЕСПУБЛИК

Государственное издательство политической литературы
Ереван • 1940

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ)

ԳԼՈՒԽ I

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 1· *Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է։*

ՀՈԴՎԱԾ 2· *ՍՍՌՄ-ի քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների դեպուտատների Սովետները, որոնք աճել ու ամրապնդվել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետևանքով։*

ՀՈԴՎԱԾ 3· *Ամբողջ իշխանությունը ՍՍՌՄ-ում պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների դեպուտատների Սովետների։*

ՀՈԴՎԱԾ 4· *ՍՍՌՄ-ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, որոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը ոչնչացնելու հետևանքով։*

ՀՈԴՎԱԾ 5· *Սոցիալիստական սեփականությունը ՍՍՌՄ-ում ունի կամ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կամ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության ձև (առանձին կոլտնտեսությունների սեփականություն, կոոպերատիվ միավորումների սեփականություն)։*

ՀՈԴՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը, հանքերը, երկաթուղային, ջրային ու օդային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհտնտեսությունները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական վայրերում, պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք են:

ՀՈԴՎԱԾ 7. Կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների հանրային ձեռնարկություններն իրենց կենդանի ու մեռյալ ինվենտարով, կոլտնտեսությունների և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից արտադրվող պրոդուկցիան, ինչպես նաև նրանց հանրային շինությունները, կազմում են կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների հանրային, սոցիալիստական սեփականությունը:

Ցուրաքանչյուր կոլտնտեսային տնտեսություն, բացի կոլտնտեսային հանրային տնտեսությունից ստացած հիմնական եկամուտից, անձնական օգտագործման համար ունի ոչ-մեծ տնամերձ հողամաս և, որպես անձնական սեփականություն՝ օժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8. Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անվճար և անժամկետ օգտագործելու համար, այսինքն՝ առհավետ:

ՀՈԴՎԱԾ 9. Տնտեսության սոցիալիստական սիստեմի հետ միասին, որը հանդիսանում է տնտեսության տիրապետող ձևը ՍՍՌՄ-ում, օրենքով թույլատրվում է մենատնտես գյուղացիների ու տնայնագործների մանր մասնավոր տնտեսություն, որը հիմնված է անձնական աշխատանքի վրա և բացառում է ուրիշի աշխատանքի շահագործումը:

ՀՈԴՎԱԾ 10. Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը՝ նրանց աշխատանքային եկամուտների ու խնայողությունների նկատմամբ, բնակելի տան և տնային օժանդակ տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առօրյա գործածության առարկաների նկատմամբ, անձնական ապառման ու հարմարության առարկաների նկատմամբ, ինչպես նաև քաղաքացիների անձնական սեփականության ժառանգման իրավունքը, պահպանվում է օրենքով:

ՀՈԴՎԱԾ 11. ՍՍՌՄ-ի տնտեսական կյանքը որոշում և նրան ուղղություն է տալիս պետական ժողովրդատնտեսական պլանը՝ հօգուտ հանրային հարստության ավելացման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, ՍՍՌՄ-ի անկախության ամրացման և նրա պաշտպանունակության ուժեղացման:

ՀՈԴՎԱԾ 12. ՍՍՌՄ-ում աշխատանքը յուրաքանչյուր աշխատանքի ընդունակ քաղաքացու պարտականությունն է և պատվի դործն է՝ համաձայն «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի:

ՍՍՌՄ-ում իրականացվում է սոցիալիզմի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»:

ԳԼՈՒԽ II

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 13. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկանների Միությունը միութենական պետություն է, կազմված հետևյալ իրավահավասար Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների կամավոր միավորման հիմունքով.

Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Վրացական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Տաջիկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Ղազախական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Կիրգիզական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի;

Կարելո–Ֆիննական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Մոլդավական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Լիտվական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Լատվական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի,

Էստոնական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի:

ՀՈԴՎԱԾ 14. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության իրավասությանը, հանձինս նրա իշխանության բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների, ենթակա են.—

ա) Միությունը միջազգային հարաբերություններում ներկայացնելը, այլ պետությունների հետ պայմանագրեր կնքելն ու նրանց ռատիֆիկացիան.

բ) պատերազմի ու խաղաղության հարցերը.

գ) ՍՍՌՄ–ի կազմի մեջ նոր ռեսպուբլիկաներ ընդունելը.

դ) ՍՍՌՄ–ի Կոնստիտուցիայի կատարման վերահսկողությունը և ՍՍՌՄ–ի Կոնստիտուցիային՝ միութենական ռեսպուբլիկաների Կոնստիտուցիաների համապատասխանությունն ապահովելը.

ե) միութենական ռեսպուբլիկաների միջև սահմանների փոփոխությունների հաստատումը.

զ) միութենական ռեսպուբլիկաների կազմում նոր երկրամասեր և մարզեր, ինչպես նաև նոր ավտոնոմ ռեսպուբլիկաներ կազմելու հաստատումը.

է) ՍՍՌՄ–ի պաշտպանության կազմակերպումը և ՍՍՌՄ–ի բոլոր զինված ուժերի ղեկավարումը.

ը) արտաքին առևտուրը՝ պետական մենաշնորհի հիմունքով.

թ) պետական անվտանգության պահպանությունը.

ժ) ՍՍՌՄ–ի ժողովրդատնտեսական պլանների սահմանումը.

ի) ՍՍՌՄ–ի միասնական պետական բյուջեի հաստատումը, ինչպես նաև միութենական, ռեսպուբլիկական ու տեղական բյուջեներ կազմելու համար ստացվող հարկերի և եկամուտների հաստատումը.

լ) ընդհանուր–միութենական նշանակություն ունեցող բանկերի, արդյունաբերական և գյուղատնտեսական հիմնարկների ու ձեռնարկությունների, ինչպես նաև առևտրական ձեռնարկությունների կառավարումը.

խ) տրանսպորտի ու կապի կառավարումը.

ծ) դրամական ու վարկային սիստեմի ղեկավարումը.

կ) պետական ապահովագրության կազմակերպումը.

հ) փոխառություններ կնքելն ու տալը.

ձ) հողօգտագործման, ինչպես նաև ընդերքի, անտառների ու ջրերի օգտագործման հիմնական սկզբունքների սահմանումը.

ղ) լուսավորության ու առողջապահության բնագավառներում հիմնական սկզբունքների սահմանումը.

ճ) ժողովրդատնտեսական հաշվառման միասնական սիստեմի կազմակերպումը.

մ) աշխատանքի օրենսդրության հիմունքների սահմանումը.

յ) դատարանակազմության և դատավարության օրենսդրությունը. քրեական ու քաղաքացիական օրենսգրքերը.

ն) միութենական քաղաքացիության վերաբերյալ օրենքները, օտարերկրացիների իրավունքների վերաբերյալ օրենքները.

շ) ամնիստիայի մասին ընդհանուր–միութենական ակտերի հրատարակումը:

ՀՈԴՎԱԾ 15. Միութենական ռեսպուբլիկաների սուվերենիտետը սահմանափակված է միայն ՍՍՌՄ–ի Կոնստիտուցիայի 14–րդ հոդվածում մատնանշված շրջանակներով: Այդ շրջանակներից դուրս յուրաքանչյուր Միութենական ռեսպուբլիկա պետական իշխանություն իրականացնում է ինքնուրույն կերպով: ՍՍՌՄ–ն պահպանում է միութենական ռեսպուբլիկաների սուվերեն իրավունքները:

ՀՈԴՎԱԾ 16. Յուրաքանչյուր Միութենական ռեսպուբլիկա ունի իր Կոնստիտուցիան, որը հաշվի է առնում ռեսպուբլիկայի առանձնահատկությունները և կառուցված է ՍՍՌՄ–ի Կոնստիտուցիայի լիովին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 17. Յուրաքանչյուր Միութենական ռեսպուբլիկայի իրավունք է վերապահվում ազատ կերպով դուրս գալու ՍՍՌ Միությունից:

ՀՈԴՎԱԾ 18. Միութենական ռեսպուբլիկաների տերիտորիան չի կարող փոխվել առանց նրանց համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 19. ՍՍՌՄ–ի օրենքները միատեսակ ուժ ունեն բոլոր միութենական ռեսպուբլիկաների տերիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 20. Միութենական ռեսպուբլիկայի օրենքի և ընդհանուր–միութենական օրենքի միջև տարաձայնություն լինելու դեպքում գործում է ընդհանուր միութենական օրենքը:

ՀՈԴՎԱԾ 21. ՍՍՌՄ–ի քաղաքացիների համար սահմանվում է միասնական միութենական քաղաքացիություն:

Միութենական ռեսպուբլիկայի յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է ՍՍՌՄ-ի քաղաքացի:

ՀՈԴՎԱԾ 22. Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է՝ Ալթայի, Կրասնոդարի, Կրասնոյարսկի, Օրջոնիկիձեի, Պրիմորյեի, Խաբարովսկի երկրամասերից. Արխանգելսկի, Վոլոգդայի, Վորոնեժի, Գորկու, Իվանովոյի, Իրկուտսկի, Կալինինի, Կիրովի, Կույբիշևի, Կուրսկի, Լենինգրադի, Մոլոտովի, Մոսկվայի, Մուրմանսկի, Նովոսիբիրսկի, Օմսկի, Օրյոլի, Պենզայի, Ռոստովի, Ռյազանի, Սարատովի, Սվերդլովսկի, Սմոլենսկի, Ստալինգրադի, Տամբովի, Տուլայի, Չելյաբինսկի, Չիտայի, Չկալովի, Յարոսլավլի մարզերից. Թաթարական, Բաշկիրական, Դաղստանի, Բուրյաթ-Մոնղոլական, Կաբարդինո-Բալկարական, Կալմիկական, Կոմի, Ղրիմի, Մարիական, Մորդվական, Մերձվոլգյան Գերմանացիների, Հյուսիսային Օսեթական, Ուդմուրտական, Չեչենո-Ինգուշական, Զուվաշական, Յակուտական ավտոնոմ սովետական սոցիալիստական ռեսպուբլիկաներից. Ադիգեական, Հրեական, Կարաչայական, Օյրոթական, Խակասական, Չերկեսական ավտոնոմ մարզերից:

ՀՈԴՎԱԾ 23. Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է Ակկերմանի, Վիննիցայի, Վոլինի, Վորոշիլովգրադի, Դնեպրոպետրովսկի, Դրագոբիչի, Ժիտոմիրի, Զապորոժյեի, Կամենեց-Պոդոլսկի, Կիևի, Կիրովոգրադի, Լվովի, Նիկոլայևի, Օդեսայի, Պոլտավայի, Ռովնոյի, Ստալինի, Ստանիսլավսկի, Սումիի, Տարնոպոլի, Խարկովի, Չերնիգովի և Չերնովիցիի մարզերից:

ՀՈԴՎԱԾ 24. Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մեջ մտնում են՝ Նախիջևանի Ավտոնոմ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան և Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզը:

ՀՈԴՎԱԾ 25. Վրացական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մեջ մտնում են՝ Աբխազական ԱՍՍՌ-ն, Աջարական ԱՍՍՌ-ն, Հարավ-Օսեթական ավտոնոմ մարզը:

ՀՈԴՎԱԾ 26. Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է՝ Բուխարայի, Սամարղանդի, Տաշքենտի, Ֆերգանայի, Խորեզմի մարզերից և Կարա-Կալպակական Ավտոնոմ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայից:

ՀՈԴՎԱԾ 27. Տաջիկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է Գարմի, Կուլյաբի, Լենինաբադի, Ստալինաբադի մարզերից և Լեռնային Բադախշանի ավտոնոմ մարզից:

ՀՈԴՎԱԾ 28. Ղազախական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է Ակմոլինսկի, Ակտյուբինսկի, Ամա-Աթայի, Արևելյան Ղազախստանի, Գուրյեվի, Ջամբուլի, Արևմտյան Ղազախստանի, Կարագանդայի, Կզըլ-Օրդայի, Կուստանայի, Պավլոդարի, Հյուսիսային Ղազախստանի, Սեմիպալատինսկի, Հարավային Ղազախստանի մարզերից:

ՀՈԴՎԱԾ 29. Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է Բարանովիչիի, Բելոստոկի, Բրեստի, Վիտեբսկի, Գոմելի, Մինսկի, Մոգիլյովի, Պինսկի և Պոլեսյեի մարզերից:

ՀՈԴՎԱԾ 29 ա. Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է Աշխաբադի, Կրասնովոդսկի, Մարիի, Տաշաուզի և Չարջոուի մարզերից:

ՀՈԴՎԱԾ 29 բ. Կիրգիզական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան բաղկացած է Ջալալ-Աբադի, Իսիկ-Կուլի, Օշի, Տյան-Շանի և Ֆրունզեի մարզերից:

ԳԼՈՒԽ III

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 30. ՍՍՌՄ-ի պետական իշխանության բարձրագույն մարմինը ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետն է:

ՀՈԴՎԱԾ 31. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետն իրականացնում է Կոնստիտուցիայի 14-րդ հոդվածով Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությանը վերապահված բոլոր իրավունքները, մինչ չափով որ նրանք համաձայն Կոնստիտուցիայի չեն մտնում ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետին հաշվետու՝ ՍՍՌՄ-ի մարմինների—ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահության, ՍՍՌ Միության ժողովրդական կոմիսարների Սովետի և ՍՍՌՄ-ի ժողովրդական կոմիսարիատների իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 32. ՍՍՌՄ-ի օրենսդրական իշխանությունն իրականացնում է բացառապես ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետը:

ՀՈԴՎԱԾ 33. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետը բաղկացած է երկու պալատից—Միության Սովետից և Ազգությունների Սովետից:

ՀՈԴՎԱԾ 34. Միության Սովետն ընտրում են ՍՍՌՄ-ի քաղաքացիներն ըստ ընտրական օկրուգների՝ 300 հազար բնակչից մի դեպուտատի նորմայով:

ՀՈԴՎԱԾ 35. Ազգությունների Սովետն ընտրում են ՍՍՌՄ-ի քաղաքացիներն ըստ միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկանների, ավտոնոմ մարզերի ու ազգային օկրուգների, հետևյալ նորմայով. 25-ական դեպուտատ յուրաքանչյուր միութենական ռեսպուբլիկայից, 11-ական դեպուտատ յուրաքանչյուր ավտոնոմ ռեսպուբլիկայից, 5-ական դեպուտատ յուրաքանչյուր ավտոնոմ մարզից և 1-ական դեպուտատ յուրաքանչյուր ազգային օկրուգից:

ՀՈԴՎԱԾ 36. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետն ընտրվում է չորս տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 37. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի երկու պալատն էլ՝ Միության Սովետը և Ազգությունների Սովետը, իրավահավասար են:

ՀՈԴՎԱԾ 38. Միության Սովետին և Ազգությունների Սովետին հավասար չափով պատկանում է օրենսդրական նախաձեռնություն:

ՀՈԴՎԱԾ 39. Օրենքը հաստատված է համարվում, եթե նա ընդունված է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի երկու պալատների կողմից՝ յուրաքանչյուրի պարզ մեծամասնությամբ:

ՀՈԴՎԱԾ 40. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի ընդունած օրենքները հրապարակվում են միութենական ռեսպուբլիկաների լեզուներով, ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 41. Միության Սովետի և Ազգությունների Սովետի սեսիաներն սկսվում և ավարտվում են միաժամանակ:

ՀՈԴՎԱԾ 42. Միության Սովետն ընտրում է Միության Սովետի նախագահ և նրան երկու տեղակալ:

ՀՈԴՎԱԾ 43. Ազգությունների Սովետն ընտրում է Ազգությունների Սովետի նախագահ և նրան երկու տեղակալ:

ՀՈԴՎԱԾ 44. Միության Սովետի և Ազգությունների Սովետի նախագահները ղեկավարում են համապատասխան պալատների նիստերը և տնօրինում են նրանց ներքին կարգը:

ՀՈԴՎԱԾ 45. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի երկու պալատների միացյալ նիստերը հերթով վարում են Միության Սովետի և Ազգությունների Սովետի նախագահները:

ՀՈԴՎԱԾ 46. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի սեսիաները հրավիրում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահությունը տարեկան երկու անգամ:

Ոչ-հերթական սեսիաները հրավիրում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահությունն իր հայեցողությամբ կամ միութենական ռեսպուբլիկաներից մեկի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 47. Միության Սովետի և Ազգությունների Սովետի միջև տարաձայնություն ծագելու դեպքում հարցը հանձնվում է լուծելու պարիտետային հիմունքներով կազմված համաձայնեցուցիչ հանձնաժողովին: Եթե համաձայնեցուցիչ հանձնաժողովը համերաշխ որոշման չի հանգում, կամ եթե նրա որոշումը չի բավարարում պալատներից մեկին, հարցը երկրորդ անգամ քննվում է պալատներում: Երկու պալատների համերաշխ որոշման բացակայության դեպքում ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահությունն արձակում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետը և նշանակում է նոր ընտրություններ:

ՀՈԴՎԱԾ 48. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետը երկու պալատների միացյալ նիստում ընտրում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահություն՝ բաղկացած ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահության Նախագահից, նրա տասնմեկ տեղակալներից, Նախագահության քարտուղարից և Նախագահության 24 անդամից:

ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահությունը հաշվետու է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի առաջ իր ամբողջ գործունեության համար:

ՀՈԴՎԱԾ 49. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահությունը՝

ա) հրավիրում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի սեսիաները.

բ) մեկնաբանում է ՍՍՌՄ-ի գործող օրենքները, հրատարակում է հրամանագրեր.

գ) արձակում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետը ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիայի 47-րդ հոդվածի հիման վրա և նշանակում է նոր ընտրություններ.

դ) կազմակերպում է համաժողովրդական հարցում (ռեֆերենդում) իր նախաձեռնությամբ կամ միութենական ռեսպուբլիկաներից մեկի պահանջով.

ե) վերացնում է ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետի և միութենական ռեսպուբլիկաների Ժողովրդական Կոմիսարների Սովետների որոշումներն ու կարգադրությունները՝ օրենքին անհամապատասխան լինելու դեպքում.

զ) ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի սեսիաների միջև ընկած

ժամանակաշրջանում պաշտոնից ազատում և նշանակում է ՍՍՌ Միության առանձին ժողովրդական կոմիսարներին՝ ՍՍՌՄ-ի ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահի առաջադրմամբ, հետագայում ներկայացնելով ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետին ի հաստատություն.

է) պարգևատրում է շքանշաններով և տալիս է ՍՍՌՄ-ի պատվավոր կոչումներ.

ը) իրականացնում է ներման իրավունքը.

թ) նշանակում և փոխում է ՍՍՌՄ-ի զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունը.

ժ) ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում պատերազմի վիճակ է հայտարարում ՍՍՌ Միության վրա ռազմական հարձակում կատարվելու դեպքում, կամ այն դեպքում, երբ անհրաժեշտ է կատարել ագրեսիայից փոխադարձաբար պաշտպանվելու միջազգային պայմանագրային պարտավորություններ.

ի) հայտարարում է ընդհանուր և մասնակի զորահավաք.

լ) ռատիֆիկացիայի է ենթարկում միջազգային պայմանագրերը.

խ) նշանակում է ՍՍՌՄ-ի լիազոր ներկայացուցիչներ օտարերկրյա պետություններում և հետ է կանչում նրանց.

ծ) ընդունում է իրեն կից ակկրեդիտացիայի ենթարկված օտարերկրյա պետությունների դիպլոմատիական ներկայացուցիչների հավատարմագրերն ու հետկանչման թղթերը:

կ) առանձին վայրերում կամ ամբողջ ՍՍՌՄ-ում պատերազմի վիճակ է հայտարարում՝ ՍՍՌՄ-ի պաշտպանության կամ հասարակական կարգի և պետական անվտանգության ապահովման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 50. Միության Սովետը և Ազգությունների Սովետն ընտրում են մանդատային հանձնաժողովներ, որոնք ստուգում են յուրաքանչյուր պալատի դեպուտատների լիազորությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջադրմամբ՝ պալատները որոշում են կամ ընդունել առանձին դեպուտատների լիազորությունները, կամ բեկանել նրանց ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 51. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետը, երբ անհրաժեշտ գտնի, նշանակում է քննիչ ու վերստուգիչ հանձնաժողովներ ամեն մի հարցի վերաբերյալ:

Բոլոր հիմնարկներն ու պաշտոնատար անձերը պարտավոր են կատարել այդ հանձնաժողովների պահանջները և նրանց ներկայացնել անհրաժեշտ նյութերն ու փաստաթղթերը:

ՀՈԴՎԱԾ 52. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի դեպուտատը չի կարող դատական պատասխանատվության կանչվել կամ ձերբակալվել առանց ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի համաձայնության, իսկ այն ժամանակաշրջանում, երբ ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի սեսիա չկա,—առանց ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահության համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 53. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի լիազորությունները լրանալուց հետո կամ ժամկետից առաջ նրա արձակվելու դեպքում ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահությունը պահպանում է իր լիազորությունները մինչև ՍՍՌՄ-ի նորընտիր Գերագույն Սովետի կողմից ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի նոր Նախագահության կազմվելը:

ՀՈԴՎԱԾ 54. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի լիազորությունները լրանալուց հետո կամ ժամկետից առաջ նրա արձակվելու դեպքում ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահությունը նշանակում է նոր ընտրություններ՝ ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի լիազորությունները լրանալուց կամ նրա արձակվելու օրից ոչ ուշ քան երկու ամսվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 55. ՍՍՌՄ-ի նորընտիր Գերագույն Սովետը հրավիրվում է ՍՍՌՄ-ի նախկին կազմի Գերագույն Սովետի Նախագահության կողմից՝ ամենաուշն ընտրություններից մի ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 56. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետը երկու պալատների միացյալ նիստում կազմում է ՍՍՌՄ-ի Կառավարությունը—ՍՍՌՄ-ի ժողովրդական Կոմիսարների Սովետը:

ԳԼՈՒԽ IV

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 57. Միութենական ռեսպուբլիկայի պետական իշխանության բարձրագույն մարմինը Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետն է:

ՀՈԴՎԱԾ 58. Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետն ընտրում են ռեսպուբլիկայի քաղաքացիները չորս տարի ժամանակով:

Ներկայացուցչության նորմաները սահմանվում են միութենական ռեսպուբլիկաների կոնստիտուցիաներով:

ՀՈԴՎԱԾ 59. Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետը ռեսպուբլիկայի միակ օրենսդիր մարմինն է:

ՀՈԴՎԱԾ 60. Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետը՝

ա) ընդունում է ռեսպուբլիկայի Կոնստիտուցիան և փոփոխություններ է մտցնում նրա մեջ՝ ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիայի 16-րդ հոդվածին համապատասխան.

բ) հաստատում է իր կազմի մեջ գտնվող ավտոնոմ ռեսպուբլիկաների Կոնստիտուցիաները և որոշում է նրանց տերիտորիայի սահմանները.

գ) հաստատում է ռեսպուբլիկայի ժողովրդատնտեսական պլանը և բյուջեն.

դ) օգտվում է Միութենական ռեսպուբլիկայի դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիների ամնիստիայի և ներման իրավունքից:

ՀՈԴՎԱԾ 61. Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետն ընտրում է Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահություն հետևյալ կազմով. Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահության նախագահ, նրա տեղակալներ, Նախագահության քարտուղար և Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահության անդամներ:

Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահության լիազորությունները որոշվում են Միութենական ռեսպուբլիկայի Կոնստիտուցիայով:

ՀՈԴՎԱԾ 62. Նիստերը վարելու համար Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետն ընտրում է իր նախագահը և նրա տեղակալները:

ՀՈԴՎԱԾ 63. Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետը կազմում է Միութենական ռեսպուբլիկայի Կառավարություն—Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետ:

ԳԼՈՒԽ V

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 64. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության պետական իշխանության բարձրագույն դործադիր ու կարգադրիչ մարմինը ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետն է:

ՀՈԴՎԱԾ 65. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետը պատասխանատու է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի առաջ և հաշվետու է նրան, իսկ Գերագույն Սովետի սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում—ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահության առաջ, որին հաշվետու է:

ՀՈԴՎԱԾ 66. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետը գործող օրենքների հիման վրա և ի կատարումն այդ օրենքների՝ հրատարակում է որոշումներ ու կարգադրություններ և ստուգում է նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 67. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումների ու կարգադրությունների կատարումը պարտադիր է ՍՍՌՄ-ի ամբողջ տերիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 68. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետը՝

ա) միավորում և ուղղություն է տալիս ՍՍՌՄ-ի ընդհանուր-միութենական ու միութենական-ռեսպուբլիկական Ժողովրդական Կոմիսարիատների և իր գերատեսչությանը ենթակա տնտեսական ու կուլտուրական այլ հիմնարկների աշխատանքին.

բ) միջոցներ է ձեռք առնում ժողովրդատնտեսական պլանը, պետական բյուջեն իրականացնելու և վարչական-դրամական սիստեմն ամրացնելու համար.

գ) միջոցներ է ձեռք առնում հասարակական կարգն ապահովելու, պետության շահերը պաշտպանելու և քաղաքացիների իրավունքները պահպանելու համար.

դ) իրականացնում է ընդհանուր ղեկավարություն օտարերկրյա պետությունների հետ ունեցած հարաբերությունների ասպարեզում.

է) սահմանում է խլական զինվորական ծառայության կոչվելու ենթակա քաղաքացիների յուրաքանչյուր տարվա կոնտինգենտները, ղեկավարում է երկրի զինված ուժերի ընդհանուր շինարարությունը.

զ) անհրաժեշտության դեպքում կազմում է ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետին կից տնտեսական, կուլտուրական ու պաշտպանական շինարարության գործերի հատուկ Կոմիտեներ և Գլխավոր Վարչություններ:

ՀՈԴՎԱԾ 69. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետն իրավունք ունի կառավարման ու տնտեսության՝ ՍՍՌՄ-ի իրավասությանը վերապահված ճյուղերում կասեցնել միութենական

ռեսպուբլիկաների Ժողովրդական Կոմիսարների Սովետների որոշումներն ու կարգադրությունները և վերացնել ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների հրամաններն ու հրահանգները:

ՀՈԴՎԱԾ 70. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետը կազմվում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի կողմից հետևյալ կազմով.

ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ.

ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահի տեղակալներ.

ՍՍՌՄ-ի Պետական պլանային հանձնաժողովի նախագահ.

Սովետական վերահսկողության հանձնաժողովի նախագահ.

ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարներ.

Արվեստների գործերի կոմիտեի նախագահ.

Բարձրագույն դպրոցի գործերի կոմիտեի նախագահ.

Պետական Բանկի Վարչության նախագահ:

ՀՈԴՎԱԾ 71. ՍՍՌՄ-ի Կառավարությունը կամ ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարը, որոնց ուղղված է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի դեպուտատի հարցապնդումը, պարտավոր են ամենաուշը երեք օրվա ընթացքում գրավոր կամ բանավոր պատասխան տալ համապատասխան պալատում:

ՀՈԴՎԱԾ 72. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, որոնք մտնում են ՍՍՌՄ-ի իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 73. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարները համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ գործող օրենքների, ինչպես նաև ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ օրենքների, որոշումների ու կարգադրությունների, և ստուգում են նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 74. ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարիատները լինում են կամ ընդհանուր-միութենական, կամ միութենական-ռեսպուբլիկական:

ՀՈԴՎԱԾ 75. Ընդհանուր-միութենական Ժողովրդական Կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը ՍՍՌՄ-ի ամբողջ տերիտորիայում ղեկավարում են կամ անմիջականորեն կամ իրենց կողմից նշանակված մարմինների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 76. Միութենական-ռեսպուբլիկական Ժողովրդական Կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը ղեկավարում են, որպես կանոն, միութենական ռեսպուբլիկաների նույնանուն Ժողովրդական Կոմիսարիատների միջոցով և անմիջականորեն կառավարում են միայն որոշ սահմանափակ թվով ձեռնարկություններ՝ ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահության կողմից հաստատվող ցուցակով:

ՀՈԴՎԱԾ 77. Ընդհանուր-միութենական Ժողովրդական Կոմիսարիատների թվին են պատկանում հետևյալ Ժողովրդական Կոմիսարիատները.

Պաշտպանության.

Արտաքին գործերի.

Արտաքին առևտրի.

Հաղորդակցության ճանապարհների.

Կապի.

Ջրային նավատորմի.

Գետային նավատորմի.

Ածխի արդյունաբերության.

Նավթի արդյունաբերության.

Էլեկտրոկայանների.

Էլեկտրաարդյունաբերության.

Սև մետալուրգիայի.

Գունավոր մետալուրգիայի.

Քիմիական արդյունաբերության.

Ավիացիոն արդյունաբերության.

Նավաշինական արդյունաբերության.

Ռազմամթերքի.

Սպառազինման.

Ծանր մեքենաշինության.

Միջին մեքենաշինության.

Ընդհանուր մեքենաշինության.

Ռազմա-ծովային Նավատորմի.

Մթերումների.

Շինարարության.

Ցելյուլոզի և թղթի արդյունաբերության:

ՀՈԴՎԱԾ 78. Միութենական-ռեսպուբլիկական Ժողովրդական Կոմիսարիատների թվին են պատկանում հետևյալ Ժողովրդական Կոմիսարիատները.

Սննդի արդյունաբերության.

Զկան արդյունաբերության.

138
VI

ՀԱՍ. ՀԱՅ. ՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԿ-ՍՍՌ Ա.
Հ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մսի և կաթի արդյունաբերության.
Թեթև արդյունաբերության.
Տեքստիլ արդյունաբերության.
Անտառային արդյունաբերության.
Հողագործության.
Հացահատիկային և Անասնաբուծական խորհտնտեսությունների.
Ֆինանսների.
Առևտրի.
Ներքին գործերի.
Արդարադատության.
Առողջապահության.
Շինարարական նյութերի արդյունաբերության:

ԳԼՈՒԽ VI

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 79. Միութենական ռեսպուբլիկայի պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետն է:

ՀՈԴՎԱԾ 80. Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետը պատասխանատու է Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի առաջ և հաշվետու է նրան, իսկ Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում—Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահության առաջ, որին հաշվետու է:

ՀՈԴՎԱԾ 81. Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետը հրատարակում է որոշումներ ու կարգադրություններ՝ ՍՍՌՄ-ի ու Միութենական ռեսպուբլիկայի գործող օրենքների, ՍՍՌՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ օրենքների, որոշումների ու կարգադրությունների, և ստուգում է նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 82. Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետն իրավունք ունի կասեցնելու ավտոնոմ ռեսպուբլիկաների Ժողովրդական Կոմիսարների Սովետների որոշումներն ու կարգադրությունները և վերացնելու երկրամասերի, մարզերի ու ավտոնոմ մարզերի աշխատավորների դեպուտատների Սովետների գործադիր կոմիտեների որոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 83. Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետը կազմվում է Միութենական ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի կողմից հետևյալ կազմով.

Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ.
Նախագահի տեղակալներ.
Պետական պլանային հանձնաժողովի նախագահ.
Ժողովրդական Կոմիսարներ՝
Սննդի արդյունաբերության.
Ձկան արդյունաբերության.
Մսի և Կաթի արդյունաբերության.
Թեթև արդյունաբերության.
Տեքստիլ արդյունաբերության.
Անտառային արդյունաբերության.
Շինարարական նյութերի արդյունաբերության.
Հողագործության.
Հացահատիկային ու Անասնաբուծական խորհտնտեսությունների.
Ֆինանսների.
Առևտրի.
Ներքին գործերի.
Արդարադատության.
Առողջապահության.
Լուսավորության.
Տեղական արդյունաբերության.
Կոմունալ տնտեսության.
Սոցիալական ապահովության.
Ավտոմոբիլային տրանսպորտի.
Արվեստների գործերի Վարչության պետ.
Ընդհանուր-միութենական Ժողովրդական Կոմիսարիատների լիազորներ:

ՀՈԴՎԱԾ 84. Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, որոնք վերաբերում են Միութենական ռեսպուբլիկայի իրավասությանը:

ՀՈԴՎԱԾ 85. *Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարները համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ ՍՍՌՄ-ի և Միութենական ռեսպուբլիկայի օրենքների, ՍՍՌՄ-ի և Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումների ու կարգադրությունների, ՍՍՌՄ-ի և միութենական-ռեսպուբլիկական Ժողովրդական Կոմիսարիատների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն դրանց:*

ՀՈԴՎԱԾ 86. *Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարիատները լինում են միութենական-ռեսպուբլիկական կամ ռեսպուբլիկական:*

ՀՈԴՎԱԾ 87. *Միութենական-ռեսպուբլիկական Ժողովրդական Կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը, ենթարկվելով ինչպես Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետին, այնպես էլ ՍՍՌՄ-ի համապատասխան միութենական-ռեսպուբլիկական Ժողովրդական Կոմիսարիատին:*

ՀՈԴՎԱԾ 88. *Ռեսպուբլիկական Ժողովրդական Կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը, ենթարկվելով անմիջականորեն Միութենական ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետին:*

ԳԼՈՒԽ VII

ԱՎՏՈՆՈՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 89. *Ավտոնոմ ռեսպուբլիկայի պետական իշխանության բարձրագույն մարմինը ԱՍՍՌ-ի Գերագույն Սովետն է:*

ՀՈԴՎԱԾ 90. *Ավտոնոմ ռեսպուբլիկայի Գերագույն Սովետն ընտրում են ռեսպուբլիկայի քաղաքացիները չորս տարի ժամանակով, ներկայացուցչության այն նորմաներով, որ սահմանվում են Ավտոնոմ ռեսպուբլիկայի Կոնստիտուցիայով:*

ՀՈԴՎԱԾ 91. *Ավտոնոմ ռեսպուբլիկայի Գերագույն Սովետն ԱՍՍՌ-ի միակ օրենսդիր մարմինն է:*

ՀՈԴՎԱԾ 92. *Ցուրաքանչյուր Ավտոնոմ ռեսպուբլիկա ունի իր Կոնստիտուցիան, որը հաշվի է առնում Ավտոնոմ ռեսպուբլիկայի առանձնահատկությունները և կառուցված է Միութենական ռեսպուբլիկայի Կոնստիտուցիային լիովին համապատասխան:*

ՀՈԴՎԱԾ 93. *Ավտոնոմ ռեսպուբլիկայի Գերագույն Սովետն ընտրում է Ավտոնոմ ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահություն և կազմում է Ավտոնոմ ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Սովետ՝ համաձայն իր Կոնստիտուցիայի:*

ԳԼՈՒԽ VIII

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 94. *Երկրամասերում, մարզերում, ավտոնոմ մարզերում, օկրուգներում, շրջաններում, քաղաքներում, գյուղերում (ստանիցաներում, գյուղակներում, խուտորներում, ղշլաղներում, աուլներում) պետական իշխանության մարմիններն աշխատավորների դեպուտատների Սովետներն են:*

ՀՈԴՎԱԾ 95. *Աշխատավորների դեպուտատների երկրամասային, մարզային, ավտոնոմ մարզերի, օկրուգային, շրջանային, քաղաքային, գյուղական (ստանիցաների, գյուղակների, խուտորների, ղշլաղների, աուլների) Սովետներն ընտրում են երկրամասի, մարզի, ավտոնոմ մարզի, օկրուգի, շրջանի, քաղաքի, գյուղի աշխատավորները երկու տարի ժամանակով:*

ՀՈԴՎԱԾ 96. *Աշխատավորների դեպուտատների Սովետներում ներկայացուցչության նորմաները որոշվում են միութենական ռեսպուբլիկաների Կոնստիտուցիաներով:*

ՀՈԴՎԱԾ 97. *Աշխատավորների դեպուտատների Սովետները ղեկավարում են կառավարման իրենց ենթակա մարմինների գործունեությունը, ապահովում են պետական կարգի պահպանումը, օրենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը, ղեկավարում են տեղական տնտեսական ու կուլտուրական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն:*

ՀՈԴՎԱԾ 98. *Աշխատավորների դեպուտատների Սովետները որոշումներ են ընդունում և կարգադրություններ են անում ՍՍՌՄ-ի և Միութենական ռեսպուբլիկայի օրենքներով իրենց տրված իրավունքների սահմաններում:*

ՀՈԴՎԱԾ 99. *Աշխատավորների դեպուտատների երկրամասային, մարզային, ավտոնոմ մարզերի, օկրուգային, շրջանային, քաղաքային ու գյուղական Սովետների գործադիր ու կարգադրիչ մարմիններն են նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեն-*

բը՝ կազմված նախագահից, նրա տեղակալներից, քարտուղարից ու անդամներից։

ՀՈԴՎԱԾ 100. Փոքր բնակավայրերում աշխատավորների դեպուտատների գյուղական Սովետների գործադիր ու կարգադրիչ մարմինը, միութենական ռեսպուբլիկաների կոնստիտուցիաներին համապատասխան, նրանց կողմից ընտրվող նախագահը, տեղակալը և քարտուղարն են։

ՀՈԴՎԱԾ 101. Աշխատավորների դեպուտատների Սովետների գործադիր մարմիններն անմիջականորեն հաշվետու են ինչպես աշխատավորների դեպուտատների այն Սովետի առաջ, որն ընտրել է նրանց, այնպես էլ աշխատավորների դեպուտատների վերադաս Սովետի գործադիր մարմնի առաջ։

ԳԼՈՒԽ IX

ԴԱՏԱՐԱՆ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 102. Արդարադատությունը ՍՍՌՄ-ում իրականացվում է ՍՍՌՄ-ում Գերագույն Դատարանի, միութենական ռեսպուբլիկաների Գերագույն Դատարանների, երկրամասային ու մարզային դատարանների, ավտոնոմ ռեսպուբլիկաների ու ավտոնոմ մարզերի դատարանների, օկրուգային դատարանների, ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի որոշմամբ ստեղծվող՝ ՍՍՌՄ-ի հատուկ դատարանների և ժողովրդական դատարանների միջոցով։

ՀՈԴՎԱԾ 103. Գործերի քննարկումը բոլոր դատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի օրենքով հատկապես նախատեսված դեպքերից։

ՀՈԴՎԱԾ 104. ՍՍՌՄ-ի Գերագույն Դատարանը բարձրագույն դատական մարմին է հանդիսանում։ ՍՍՌՄ-ի Գերագույն Դատարանի վրա դրվում է ՍՍՌՄ-ի և միութենական ռեսպուբլիկաների բոլոր դատական մարմինների դատական գործունեության հսկողությունը։

ՀՈԴՎԱԾ 105. ՍՍՌՄ-ի Գերագույն Դատարանը և ՍՍՌՄ-ի հատուկ դատարաններն ընտրվում են ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի կողմից հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 106. Միութենական ռեսպուբլիկաների Գերագույն Դատարաններն ընտրվում են միութենական ռեսպուբլիկաների Գերագույն Սովետների կողմից հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 107. Ավտոնոմ ռեսպուբլիկաների Գերագույն Դատարաններն ընտրվում են ավտոնոմ ռեսպուբլիկաների Գերագույն Սովետների կողմից հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 108. Երկրամասային և մարզային դատարանները, ավտոնոմ մարզերի դատարանները, օկրուգային դատարաններն ընտրվում են աշխատավորների դեպուտատների երկրամասային, մարզային կամ օկրուգային Սովետների կողմից կամ ավտոնոմ մարզերի աշխատավորների դեպուտատների Սովետների կողմից հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 109. Ժողովրդական դատարաններն ընտրում են շրջանի քաղաքացիները՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ—երեք տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 110. Դատավարությունը կատարվում է միութենական կամ ավտոնոմ ռեսպուբլիկայի կամ ավտոնոմ մարզի լեզվով, այդ լեզվին չտիրապետող անձերի համար ապահովելով լիակատար ծանոթացումը գործի նյութերին թարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը։

ՀՈԴՎԱԾ 111. Գործերի քննությունը ՍՍՌՄ-ի բոլոր դատարաններում, որչափով օրենքը բացառություններ չի նախատեսում, կատարվում է դռնբաց, ապահովելով մեղադրյալի պաշտպանության իրավունքը։

ՀՈԴՎԱԾ 112. Դատավորներն անկախ են և միայն օրենքին են ենթարկվում։

ՀՈԴՎԱԾ 113. Բոլոր ժողովրդական կոմիսարիատների և նրանց գերատեսչությանը ենթակա հիմնարկների, ինչպես առանձին պաշտոնատար անձերի, նույնպես և ՍՍՌՄ-ի քաղաքացիների կողմից օրենքները ճշգրիտ կերպով կատարելու բարձրագույն հսկողությունը դրվում է ՍՍՌՄ-ի Դատախազի վրա։

ՀՈԴՎԱԾ 114. ՍՍՌՄ-ի Դատախազը նշանակվում է ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի կողմից յոթ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 115. Ռեսպուբլիկական, երկրամասային, մարզային դատախազները, ինչպես նաև ավտոնոմ ռեսպուբլիկաների ու ավտոնոմ մարզերի դատախազները, նշանակվում են ՍՍՌՄ-ի Դատախազի կողմից հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 116. Օկրուգային, շրջանային և քաղաքային դատախազները նշանակվում են միութենական ռեսպուբլիկաների դատախազների կողմից՝ ՍՍՌՄ-ի Դատախազի հաստատմամբ—հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 117. Դատախազության մարմիններն իրենց ֆունկցիաներն իրականացնում են անկախ տեղական որևէ մարմնից, ենթարկվելով միայն ՍՍՌՄ-ի Դատախազին:

ԳԼՈՒԽ X

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 118. ՍՍՌՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու որակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպմամբ, սովետական հասարակության արտադրողական ուժերի անշեղ աճմամբ, տնտեսական կրիզիսների հնարավորության վերացմամբ և գործազրկության լիկվիդացիայով:

ՀՈԴՎԱԾ 119. ՍՍՌՄ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների ճնշող մեծամասնության համար աշխատանքային օրը կրճատելով-հասցնելով 7 ժամի, բանվորների ու ծառայողների համար տահմանելով տարեկան արձակուրդ, որի ընթացքում պահպանվում է նրանց աշխատավարձը, աշխատավորներին սպասարկելու համար սանատորիաների, հանգստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 120. ՍՍՌՄ-ի քաղաքացիները նյութական ապահովության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում:

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու ծառայողների համար պետության հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ, աշխատավորներին ձրի բժշկական օգնություն ցույց տալով, աշխատավորներին օգտագործման համար կուրորտների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 121. ՍՍՌՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, խորհտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով:

ՀՈԴՎԱԾ 122. Կնոջը ՍՍՌՄ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում:

Կանանց այդ իրավունքների իրականացման հնարավորությունն ապահովվում է կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կրթության ասպարեզում, մոր ու մանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղիության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկամատուցների ու մանկապարտեզների լայն ցանցով:

ՀՈԴՎԱԾ 123. ՍՍՌՄ-ի քաղաքացիների իրավահավասարությունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ նրանց ազգությունից ու ռասայից, հանդիսանում է անխախտ օրենք:

Իրավունքների որևէիցե ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ ընդհակառակը, ռասայական ու ազգային պատկանելությունից ելնելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես նաև ռասայական ու ազգային բացառիկության, կամ ատելության ու արհամարհանքի ամեն տեսակ քարոզ—պատժվում են օրենքով:

ՀՈԴՎԱԾ 124. Քաղաքացիների համար խղճի ազատություն ապահովելու նպատակով եկեղեցին ՍՍՌՄ-ում բաժանված է պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց: Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդայի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների համար:

ՀՈԴՎԱԾ 125. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական կարգերն ամրացնելու նպատակով ՍՍՌՄ-ի քաղաքացիների համար օրենքով ապահովվում է.

ա) խոսքի ազատություն,

բ) մամուլի ազատություն,

գ) ժողովների ու միտինգների ազատություն,

դ) փողոցային երթերի ու ցույցերի ազատություն:

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովվում են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և աշխատավորների այդ իրավունքներն իրականացնելու համար անհրաժեշտ այլ նյութական պայմաններ:

ՀՈԴՎԱԾ 126. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպական ինքնագործունեությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ապահովվում է ՍՍՌՄ-ի քաղաքացիների իրավունքը՝ միավորվելու հասարակական կազմակերպությունների մեջ՝ արհեստակցական միություններ, կոոպերատիվ միավորումներ, երիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտպանողական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ, իսկ բանվոր դասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի մեջ, որն աշխատավորների առաջավոր ջոկատն է՝ սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում և աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների ղեկավար կորիզն է ներկայացնում:

ՀՈԴՎԱԾ 127. ՍՍՌՄ-ի քաղաքացիների համար ապահովվում է անձի անձեռնմխելիություն: Ոչ ոք չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան դատարանի որոշմամբ կամ դատախազի սանկցիայով:

ՀՈԴՎԱԾ 128. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունն ու նամակագրության գաղտնիությունը պահպանվում են օրենքով:

ՀՈԴՎԱԾ 129. ՍՍՌՄ-ն ապաստանի իրավունք է վերապահում օտարերկրյա քաղաքացիներին, որոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու, կամ գիտական գործունեության, կամ ազգային-ազատագրական պայքարի համար:

ՀՈԴՎԱԾ 130. ՍՍՌՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կոնստիտուցիան, կատարել օրենքները, աշխատանքի կարգապահություն պահպանել, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 131. ՍՍՌՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, որպես սովետական կարգերի սրբազան ու անձեռնմխելի հիմք, որպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, որպես բոլոր աշխատավորների ունևոր ու կուլտուրական կյանքի աղբյուր:

Հանրային, սոցիալիստական սեփականության դեմ ոտնձգություն անող անձերը ժողովրդի թշնամիներ են:

ՀՈԴՎԱԾ 132. Ընդհանուր զինվորական պարտականությունն օրենք է հռչակվում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ՍՍՌՄ-ի քաղաքացիների պատվավոր պարտականությունն է:

ՀՈԴՎԱԾ 133. Հայրենիքի պաշտպանությունը ՍՍՌՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճանելը—երդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը—պատժվում են օրենքի ամբողջ խստությամբ, որպես ամենածանր չարագործություն:

ԳԼՈՒԽ XI

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 134. Աշխատավորների դեպուտատների բոլոր Սովետները—ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի, միութենական ռեսպուբլիկաների Գերագույն Սովետների, աշխատավորների դեպուտատների երկրամասային ու մարզային Սովետների, ավտոնոմ ռեսպուբլիկաների Գերագույն Սովետների, ավտոնոմ մարզերի աշխատավորների դեպուտատների Սովետների, աշխատավորների դեպուտատների օկրուգային, շրջանային, քաղաքային ու գյուղական (ստանիցայի, գյուղակի, խուտորի, ղշլաղի, առուլի) Սովետների դեպուտատների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 135. Դեպուտատների ընտրություններն ընդհանուր

են. ՍՍՌՄ–ի բոլոր քաղաքացիները, որոնք 18 տարեկան են, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու, բացի խելագարներից և այն անձերից, որոնք դատարանի կողմից դատապարտված են՝ ընտրական իրավունքների զրկումով:

ՀՈԴՎԱԾ 136. Դեպուտատների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 137. Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են տղամարդկանց հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 138. Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են բոլոր քաղաքացիների հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 139. Դեպուտատների ընտրություններն ուղղակի են. աշխատավորների դեպուտատների բոլոր Սովետների ընտրությունները, սկսած աշխատավորների դեպուտատների գյուղական ու քաղաքային Սովետից մինչև ՍՍՌՄ–ի Գերագույն Սովետը, քաղաքացիները կատարում են անմիջականորեն ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 140. Դեպուտատների ընտրության ժամանակ քվեարկությունը գաղտնի է:

ՀՈԴՎԱԾ 141. Ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական օկրուգների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների — կոմունիստական պարտիական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, կոոպերատիվների, երիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների—համար:

ՀՈԴՎԱԾ 142. Յուրաքանչյուր դեպուտատ պարտավոր է ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավորների դեպուտատների Սովետի աշխատանքի մասին և կարող է, ուզած ժամանակ հետ կանչվել ընտրողների մեծամասնության որոշմամբ, օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ XII

ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 143. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության պետական գերբը բաղկացած է մանգաղից ու մուրճից՝ երկրագնդի վրա, որը պատկերված է արեգակի ճառագայթների մեջ ու շրջանակված հասկերով և կրում է միութենական ռեսպուբլիկաների լեզուներով գրված «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մակագրությունը: Գերբի վերևում կա հընդաթև աստղ:

ՀՈԴՎԱԾ 144. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության պետական դրոշակը բաղկացած է կարմիր կտորից, որի վերին անկյունում կոթի մոտ նկարված են ոսկեհուռ մանգաղ ու մուրճ և նրանց վերևում հնգաթև կարմիր աստղ՝ շրջանակված ոսկեհուռ երիզով: Լայնության և երկարության հարաբերությունն է՝ 1:2:

ՀՈԴՎԱԾ 145. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մայրաքաղաքը Մոսկվա քաղաքն է:

ԳԼՈՒԽ XIII

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 146. ՍՍՌՄ–ի Կոնստիտուցիայի փոփոխումը կատարվում է միայն ՍՍՌՄ–ի Գերագույն Սովետի որոշմամբ՝ ընդունված նրա պալատներից յուրաքանչյուրի ձայների առնվազն $^2/_3$–ի մեծամասնությամբ:

Գլ. հերթական գրադարան
Гос. Публичная библиотека
ՀՍՍՀ-ССР А.
Ա. Մասիսյան
անվան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՆ

(Հիմնական Օրենքը)

Էջ

Գլուխ I. Հասարակական կառուցվածքը 3
Գլուխ II. Պետական կառուցվածքը 4
Գլուխ III. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության պետական իշխանության բարձրագույն մարմինները 9
Գլուխ IV. Միութենական ռեսպուբլիկաների պետական իշխանության բարձրագույն մարմինները 13
Գլուխ V. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության պետական կառավարման մարմինները 14
Գլուխ VI. Միութենական ռեսպուբլիկաների պետական կառավարման մարմինները 18
Գլուխ VII. Ավտոնոմ սովետական սոցիալիստական ռեսպուբլիկաների պետական իշխանության բարձրագույն մարմինները . . . 20
Գլուխ VIII. Պետական իշխանության տեղական օրգանները 21
Գլուխ IX. Դատարան և դատախազություն 22
Գլուխ X. Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները 24
Գլուխ XI. Ընտրական սիստեմը 27
Գլուխ XII. Դերբը, դրոշակը, մայրաքաղաքը 29
Գլուխ XIII. Կոնստիտուցիան վերանայելու կարգը 29

Թարգմ. խմբագիր Հ. Գալուստյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Ա. Մանուկյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Հրատարակության № 857, պատվեր № 354, заказ № 354
Տիրաժ 5000, тираж 5000
Հանձնվել է արտադրության 30/XI 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 4/XII 1940 թ.
Գինը 30 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
Երևան, Ալլահվերդյան № 65
Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65.

ՀՅ 2134

ՀՀ Ազգային գրադարան
NL0208981

34.848

ԳԻՆԸ 30 Կ.

КОНСТИТУЦИЯ

(ОСНОВНОЙ ЗАКОН)

СОЮЗА СОВЕТСКИХ СОЦИАЛИСТИЧЕСКИХ РЕСПУБЛИК

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940